

# Խ. Միութեան Ազգութիւններու Խորհուրդին Բ. Օլէնիկի Տեղեկագիրը

Ստորեւ Խ. Միութեան Ազգութիւններու Խորհրդի Յանձնաժողովին ամփոփագիրը, որ ներկայացուած է Խորհուրդի նիստին:

Ձեր յանձնարարութեամբ, հաւաստելով խոր յարգանք ատրպէյճանական եւ հայ ժողովուրդներէ, բոլոր զարաբաղցիներէ հանդէպ, ես պէտք է հրապարակեմ մի իւրօրինակ նախնական անաշառ ամփոփագիր Լեոնային Ղարաբաղի ներկայիս վիճակի մասին: Եթէ յանձնաժողովի անդամները որեւէ շտկումներ նկատեն մեր համաձայնեցրած տեքստում, ապա ասեմ, որ դրանք արուած են ոչ զէպի լաւ կողմը Մարզի իրավիճակի արագօրէն փոփոխուելու հետեւանքով:

Եւ այսպէս, ի կատարումն ժողովրդական դեպուտատներէ առաջին համագումարի որոշման, կազ-

մտնեսութեան առաջատար ճիւղերում երկարատեւ գործադուլներն ու պարապուսները, գաղթականներէ յարաճուն քանակը կործանարար են անդրադարձում աշխատուորներէ նիւթական վիճակի վրայ, սրում բարոյաքաղաքական իրազրուիւնը:

Ներկայումս ԼՂԻՄի բնակչութեան հայկական եւ ատրպէյճանական մասերի խորթացումը անմշակ սուր ձեւեր է ընդունել, որ դրսեւորում է հասարակական կեանքի բոլոր մակարդակներում: Անվստահութիւնը, վախը, մշտական նեարդացունց վիճակները լարուածութեան հետագայ մեծացման իրական վտանգ են ստեղծում: Դրա վկայութիւնն են պատ-



Հարցազրոյց Յանձնաժողովի անդամ Պորիս Օլէնիկի հետ: Աջին՝ Զ. Բալայեան

մուել էր ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Յանձնաժողով Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ներկայիս ոչալ իրավիճակն ուսումնասիրելու համար: Գիտակցելով իր առաքելութեան ամբողջ պատասխանատուութիւնը, Յանձնաժողովը ջանում էր ուսումնասիրել ստեղծուած կացութիւնը, ըստ էութեան, Մարզի առանց բացառութեան բոլոր շրջաններում: Այդ նպատակով անցկացուեցին հանդիպումներ աշխատուորական կոլեկտիւններէ, բանուորներէ ու զիւղացիներէ, հասարակայնութեան տարբեր խաւերի, կուսակցական-տնտեսական ակտիւի, երկու ազգութեան գաղթականներէ հետ: Դրա հետ մէկտեղ ամէն մի դեպուտատ անցկացրեց երկու կողմերի քաղաքացիներէ ընդունելութիւն անձնական հարցերով: Կատարուած աշխատանքի հետեւանքով մեզանից իւրաքանչիւրը եւ ամբողջ Յանձնաժողովը յանգեցին միանշանակ հետեւութեան՝ Լեոնային Ղարաբաղի իրազրուիւնը դուրս է եկել լարուածութեան այն գծից, որը կարելի է բնութագրել որպէս պայթիւնալի: Յաւոք, իրազրուիւնը կարգաւորելու եւ վստահութիւնը վերականգնելու նպատակով աւելի վաղ ձեռնարկուած միջոցները պատշաճ արդիւնք չտուեցին: Տնտեսութեան կառուցուածքը առողջացնելու եւ նրա մէջ փոփոխութիւններ մտցնելու ղեկավար մարմիններէ որոշումներով նախատեսուած միջոցառումները իրականացուած էին անհետեւողականօրէն եւ ոչ կոմպլեքսայնօրէն, չէին ամրապնդում նիւթատեխնիկական պատշաճ ապահովմամբ: Ժողովրդական

մական ու մշակութային յուշարձաններէ աւերման եւ պղծման դէպքերը, տներէ հրկիզումները, ոչ ազգակից անձանց նկատմամբ գործադրուող դաժանութիւնը:

Նկատի առնելով Մարզի իրազրուիւնն ծայրայեղ սրուածութիւնը եւ գիտակցելով, որ լարուածութեան վերացման աննշան իսկ յապաղումը յղի է անկանխատեսելի հետեւանքներով, մեր կարծիքով, լուծման առումով յետաձգել չհանդուրժող առաջնահերթ խնդիրներն են ճշմարտամիտ աստիճանաբար դուրս գալու նախադրեալների ստեղծումը, բռնութիւնների դադարեցումը եւ մարդկանց կեանքի ու կայքի պաշտպանութիւնը, Ղարաբաղի երկու ազգութիւնների ազգային, սոցիալական եւ միւս իրաւունքների կիրառման երաշխիքներ ապահովելու համար պայմանների ստեղծումը: Այդ նպատակով կարելի էր լրացուցիչ քննարկել Մարզում քաղաքական իշխանութիւնների գործունէութիւնը վերականգնելու հնարաւորութիւնը, պահպանելով հանդերձ նրա՝ որպէս յատուկ կառավարման մարզի կարգավիճակը, անշեղօրէն հաշուի առնելով երկու կողմերու շահերը:

Իսկ այժմ, ընկերներ, զուտ մարդկայնօրէն, որպէս բանաստեղծ ու գում եմ ասել, երկու հանրապետութիւնների թանկագին, յարգելի եղբայրներ ու քոյրեր, նախ եւ առաջ ղեկավարներ: Գէթ մի քայլ կամ գոնէ կէս քայլ արէք միմեանց ընդառաջ: Ձէ որ միեւնոյն չափով տուժում են երկու ժողովուրդները: Եւ դրա համար հիմնական պատասխանատուութիւնը ընկած է ձեզ՝ ղե-

կավարներէ վրայ: Դուք՝ հանրապետութիւնների առաջին դէմքերը, պէտք է ամէն ինչ անէք, որպէսզի զարաբաղցի երեսաները, Սեպտեմբերի 1ին զբաղեցնեն աշակերտական նստարանները, որ մարդիկ ունենան ջուր, աղ ու հաց, որ միանգամայն անմեղ տառապող գաղթականները օթեւան ստանան կամ գոնէ փոխհատուցում ոչ իրենց մեղքով թողած օճախների համար: Դուրս բերէք վերջապէս Լեոնային Ղարաբաղը այդ վիճակից, որը, ամօթ մեզ ու ձեզ, կարելի է բնութագրել որպէս ուղղակի շրջափակում եւ դա խաղաղ ժամանակներում: Եւ եկէք չմոռանալ, որ աշխատուոր մարդիկ, որոնք այս կամ այն պատճառով հեռացուած են աշխատանքից, ի վերջոյ կորցնում են իրատեսութեան եւ սեփական արժանապատուութեան զգացումը, իսկ դա արդէն աններելի մեղք է, որն ընկնում է նախ եւ առաջ նրանց հովիւների վրայ: Յանձնաժողովը ձեզ հետ միասին իր կարելի կ'անի, որպէսզի շարունակի փնտրել ու գտնել Ղարաբաղի խնդրի նպատակայարմար լուծումը առանց նուազագոյն իսկ յապաղման:

Մեծ շնորհակալութիւն ենք յայտնում երկու կողմերին, որոնք չնայած դրութեան սրութեանը, Յանձ-

նաժողովի համար ստեղծել էին բոլորը պայմանները օրէկուտօրէն գնահատելու իրավիճակը: Այդ առնչութեամբ նա երկու կողմերին խնդրում է յանձնարարականների մշակման ընթացքում ձեռնպահ մնալ իր աշխատանքին միջամտելուց: Խնդրում ենք նաեւ Լեոնային Ղարաբաղի, Ատրպէյճանի եւ Հայաստանի մասսայական լրատուութեան միջոցներին, ուստիոյն ու հեռուստատեսութեանը ձեռնպահ մնալ փոխադարձ մեղադրանքներից:

Չապորոժիեւի բնակիչները դեպուտատներին հասցէագրած դիմումի մէջ յիշեցրել էին. սուրբ գրքում ասուած է, որ առաջին աշխարհը ոչնչացուել է ջրով, երկրորդ աշխարհը կը պահպանուի մինչեւ կրակը: Ահա այդ երկրորդ ելքից պէտք է յատկապէս երկիւղ կրենք բոլորս, քանի որ կրակի հետեւում արիւնն է:

Հնարուոր ամէն ինչ անել, որպէսզի այդ բազմաշարժար հողում այլեւ երբեք արիւն չհեղուի. սա էլ մեր առաջին պարտականութիւնը: Եւ թող բազմապատուեն մեր իմաստութիւնն ու արիութիւնը համբերատարութեամբ ու հանդուրժողականութեամբ: Եւ թող մեզ հովանի լինի մեր նախնիների հոգին աղաւնու տեսքով խաղաղութեան ձիթենու ճիւղը կտցին:

## ՆԱՄԱԿԱՆԻ

Պատուարժան խմբագրութիւն «Պայքար» Շաբաթաթերթի, Պոստոն ARM. MIRROR-SPECTATOR-ի (Յուլիս 22, 1989) մէջ կարդացի Պրն. Տիգրան Ժամկոչեանի կազմակերպած դէպի Հայաստան շրջապտոյտի մասնակցող Պրն. Ռ. Մուրատեանի նամակը, ուր նամակագիրը կը յայտնէր իր յուսախարութիւնները:

Տիկինս եւ ես ալ 1988ի ամառը «Պայքար»ի մէջ երեւցած ծանուցումի որպէս հետեւումք - թերթի մը յայտարարութիւնները պէտք է ունենան խմբագրութեան գէթ անպաշտօն վստահելիութեան դրոշմը - մասնակցեցանք Պրն. Տ. Ժամկոչեանի Խորհրդային Միութիւն եւ Հայաստան կազմակերպած մէկ շրջապտոյտին:

Առաջին հանդիպումիս իսկ, զգացի թէ սխալ մը գործած էի: Մեր դեկավարը անփափկանկատ էր, եսաւէր բայց մանաւանդ՝ ապիկար: Մեղադրեցի ինքզինքս միայն: Անհրաժեշտ տեղեկութիւնները չէի բաղած մեր առաջնորդին մասին:

Այս տողերը - ինչ մը ուշ - կը գրեմ հաստատելու Պրն. Ռ. Մուրատեանի գրութեան պարունակութիւնը ամբողջութեամբ: Ապրած եմ նոյն յուսախարութիւնները: Կը նկատեմ թէ անժուժկալ եղած է իր արտայայտութիւններուն մէջ:

Պրն. Ժամկոչեանի համար նպաստաւոր պատասխան գրութեան մէջ («Արմինիըն Միրըր-Սփէքէյթըր») կը յիշուի թէ ան երաժիշտ է: Երաժիշտագետի հանգամանքը, հայաստանաւէր եւ հայ մտաւորականներու բարեկամ ըլլալը... կրնան ճիշդ ըլլալ, Պրն. Ժամկոչեան կրնայ նոյնիսկ թղթակիցի յատկութիւններ ալ ունենալ, բայց այս բարեմիշները ոչ մէկ կապ ունին իր շրջապտոյտը կազմակերպելու եւ մանաւանդ ղեկավարելու հետ: Պիտի բնադրեմ որեւէ հայրենակիցի, որ նոյն սխալը գործէ: Այս մարդը նոր գոհեր պէտք չէ ունենայ:

Անշուշտ որ «Պայքար»ի խմբագրութիւնը պարտաւորութիւններ ունի ընթերցողներուն հանդէպ:

Յարգանքներով՝ ՍԱՐԳԻՍ ՀԱՄԱԼԵԱՆ Յ.Գ. Այս առիթով կ'ուզեմ յիշել թէ մեր շրջապտոյտին, խումբին մաս կը կազմէին Պրն. Ժամկոչեանի շնորհալի տիկինը եւ երկու մանչերը որոնց հետ մեր կապերը եղան միշտ սիրալիւր եւ պտոյտի ծանր մթնոլորտին պատեհանցիկ հանելի պահեր: Մոնթրէալ 17 Օգոստոս, 1989

ՊԱՅՔԱՐ - Ինչպէս կը տեսնուի, այս առաջին անգամը չէ որ Ռուշինկիւն հաստատուած Պրն. Տիգրան Ժամկոչեանի կազմակերպած եւ Հայաստան առաջնորդած շրջապտոյտներուն մասին գանգատներ եւ վերապահութիւններ կը յայտնուին: Մոնթրէալի մեր վաղեմի եւ յարգելի բարեկամը, սակայն, այս առթիւ սրտատախտաւորութեան հրաւեր կ'ուղղէ նաեւ «Պայքար»ի (եւ ենթադրաբար՝ բոլոր հայկական թերթերուն) խմբագրութեան, որ տեղ տուած է Պրն. Ժամկոչեանի կողմէ կազմակերպուած շրջապտոյտին վճարովի յայտարարութեան:

Առ ի գիտութիւն կ'ուզենք իմացնել, որ մամուլը ստիպուած է վաճառանական վճարովի յայտարարութիւններ կատարել եւ իրաւունքը չունի մերժելու յայտարարութիւն մը, այնքան ատեն որ խնդրոյ առարկայ վաճառատունը կամ ընկերութիւնը օրէնքին առջեւ յանցաւոր չէ, կամ իր գործունէութեան դէմ դատավճիռ չէ ստացած, եւ կամ անբարոյական կողմ մը չէ:

Միւս կողմէ, մամուլին պարտականութիւնն է նաեւ տեղ տալ նմանօրինակ գրաւոր գանգատներու...: